



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՂ  
COUNCIL OF PUBLIC TV AND RADIO COMPANY OF THE REPUBLIC OF ARMENIA

№ 10-013

«18» հունվարի 2015

Հայաստանի Հանրապետության  
հեռուստատեսության և ռադիոյի  
ազգային հանձնաժողովի նախագահ  
պարոն Գ. Բունիայանին

Հարգելի պարոն Բունիայան,

Ձեզ ենք ներկայացնում Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների նախագիծը 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի դնելու քարոզչության ժամանակահատվածում Հանրային հեռուստատեսության և Հանրային ռադիոյի վճարովի եթերաժամի գները սահմանելու մասին» N 59-Լ որոշման պատճենը:

Առդիր՝ 2 էջ:

Խորհրդի նախագահ

Ռ. Զաղինյան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՐՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 Հոկտեմբեր, 2015 թվականի N° 59-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀԱՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ԴՆԵԼՈՒ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄԻ ԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի, «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3.1-ին մասի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 2015թ.-ի հոկտեմբերի 10-ի N 61-Ա որոշումը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների նախագիծը 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի դնելու քարոզչությանը մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան անվճար և վճարովի եթերաժամ տրամադրել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների եթերներում:
2. Հեռուստատեսության եթերաժամանակը տրամադրել Հանրային հեռուստաընկերության վերերկրյա կապուղիներով հեռարձակվող «Առաջին ալիք»-ի եթերում, իսկ ռադիոեթերը՝ Հանրային ռադիոընկերության 69.7 Մհց գերկարճ հաճախությունով և FM հանրապետական ցանցով (Երևանում 107.7 Մհց):
3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների նախագիծը 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի դնելու քարոզչության ժամանակահատվածում հանրաքվեի քարոզչության համար տրամադրվող վճարովի եթերաժամի 1 րոպեի գինը Հանրային հեռուստատեսության եթերի համար սահմանել 70 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) և Հանրային ռադիոընկերության եթերի համար՝ 3 600 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

4. Սույն որոշման 3-րդ կետում սահմանված գները հրապարակել Հանրային հեռուստատեսության և Հանրային ռադիոյի եթերներում մինչև 2015 թվականի հոկտեմբերի 19-ը:
5. Ապահովել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության եթերում հեռարձակվող նախընտրական քննարկության համաժամանակյա հեռարձակումը Շիրակի հանրային հեռուստառադիոյի եթերում:
6. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» և «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր տնօրեններին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

15 Հոկտեմբեր, 2015 թվականի

ք. Երևան



Ռ. ԶԱՂԻՆՅԱՆ